

4489

№ 2111

С. ЪЕСТЪЕРЪ



БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТУ  
БІОЛОГІЧНИХ  
АКАДЕМІИ НАН  
ССР

„РУСЬКІЙ ЧЕРІСТЫЙ ІОС“



Фільм „Рампа и Жизнь“ - №  
8042. УРСРМІУССР.

Фільм  
Прем'єра. 1912

83  
4-53

4489

8818

Arm  
6183

83

4-53

Ա. ԵԿՑԴԳԱՐԴՅԱՆ ՀՀ ԽՈՍՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱՄ

6 NOV 2008  
Института  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# „ԹԱՏՐՈՒԻ ՎԵՐԱՏԵՍՈՒԻ ՄՈՏ“

(Կատակերգութիւն մէկ արարուածով)



Թարգմ. „Рампа и Жизнь“-ից  
ՅԱՎՀ. ՄԵԾՆԵՐՆԻ.

ԹԻՖԼԻՍ  
Արագատիս «Էջապերանո»  
1912

11.07.2013

ԱՐԴՅՈՒՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀՀՀ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ



1. ԲԱՐԲՈՆ ԳԼԻՆՑԲԵՐԳԻ Արքունակ. թատ. վերատեսուչ:
2. ՇՊՈՒԻՆԳԵՐ . . . Թատրոնական գործակալ:
3. ԿԱՊԵԼԻՇԻՆԵՐ . . . (Ծառայ):
4. ԻՐՄԱՆ ԼԻԼՉԻՆԻ . . . Դերասանուհի:



Դորձողութիւնը կատարւում է գերմանական մեծ քաղաքներից մէկում, արքունական թատրոնի վերատեսչի վառահեղ ընդունաբանում.—աջ պատուհանի մօտ զրասեղան, փափուկ բազմոց—մահա. —ձախ անկիւնում մեծ պատսպար (շիրմա). երկու գուռ մէկը՝ մէջտեղից, միւսը՝ կողքից:



60690-67



Տ Զ Շ

## ՏԵՍԻԼ ԱԹԱԶԻՆ

Բարոն Դիմեքերզը բնած է բազմոցի վրայ և երեսն երեսն խռմիում է. յատակի վրայ ցրուած են մի բանի ձեռագիրներ, նրանցից մեկը բոնած ունի ձեռքի մեջ, որը կախուած է բազմոցից. մտեում է կապելդիները, մի քի կանգ առնում նրա առաջ, ցածր հազում է զգոյշ մօ-  
տենում:

Կ ա պ ե լ դ ի ն ե ր. Զերդ գերազանցութիւն...  
ձերդ գերազանցութիւն: (Կամացուկ շարժում է):  
Զերդ գերազանցութիւն... Ի՞նչ խորն է քննել:  
(Նալելով ձեռագիրներին): Մըքան ձեռագիրներ է  
խեղճին վիճակուել կարդալու... այսքանը կար-  
դալուց յետոյ ակամայ քունդ կտանի ու կընես:  
(Նրան): Զերդ գերազանցութիւն... ձերդ գերա-  
զանցութիւն...

Վ ե ր ա տ ե ս ո ւ չ. (ցատկելով): Հը՛, ի՞նչ է...  
ի՞նչպէս... այս բոպէյիս... (Քնիու հայեացք ձգելով):  
Ա՛ն, այդ դնւք էք: (Բարկացած): Դարձեալ եկաք.  
Ի՞նչ էք ցանկանում, չէ որ ասացի սաստիկ զբա-  
զուած եմ, և շատ շտապ գործ ունիմ: Սատա-  
նան տանի ձեզ. ինգրեցի շխանգարել... բայց...  
Կ ա պ ե լ դ ի ն ե ր. Ներողութիւն ձերդ գերա-  
զանցութիւն բայց... պարոն Շպոփնդերը ցան-  
կանում է ձեզ տեսնել:

Վերատես. Թատրոնական գործակալը...  
ինչ է ցանկանում...

Կապելդիներ. Ասում է, թէ անհրաժեշտ  
գործ ունի:

Վերատեսուչ. (դժոն): Եհ, ինչ արած,  
խնդրեցէք այստեղ...

Կապելդ. (ուզում է հաւաքել ցրուած ձեռագրեր):

Վերատեսուչ. Ոչ, ոչ, թողէք, հարկաւոր  
չէ, թողէք այդպէս ցրուած մնան... այդպէս լաւ  
է. նա կտեսնի, որ ես շատ եմ զբաղուած և  
այդ ինձ համար առիթ կլինի նրանից շուտ ա-  
զատուելու... (Յանկարծ): Հա, լաւ յիշեցի, ա-  
սացէք խնդրեմ, պատուիրեցիք, որ սենեակումս  
զանգը շինեն, որի մասին ասել էի ձեզ...

Կապելդ. Ինչպէս չէ, զանգը շինուած է  
սեղանի տակ յատակի վրայ. գիտէք, հէսց ինքը  
վարպետը շինեց:

Վերատեսուչ. (զննելով): Շատ լաւ, շատ  
լաւ. Ուրեմն, ինձ մնում է միմիայն ոտքով հպել,  
ահա այստեղ... և նա կզանդահարէ. սքանչելի  
բան... (Ուժով հապում է զանգի կրնակին, եւ կույսնե-  
րում լսում է զանգի ձայնը): Հրաշալի է... Ուրեմն,  
յիշեցէք. ամեն անգամ հէսց որ լսէք զանգի ձայ-  
նը, իսկոյն և եթ մտէք ընդունարանս ու յայտ-  
նեցէք, որ ինձ հետ ցանկանում են խօսել մի  
անհրաժեշտ գործի վերաբերեալ մի որ և է բեժիս-  
սեօր, զիսաւոր վերատեսուչ, դրամատուրգ, աստի-

ճանաւոր կամ նրանցից որ և է մէկը, որոնց ես  
պարտաւոր եմ ընդունել և որոնց չեմ կարող  
չընդունել: Դուք ինձ հասկանո՞ւմ էք... այն...  
հասկանո՞ւմ էք...

Կապելդիներ. Ի հարկէ, հասկանում եմ  
չէ-որ դուք այնպիսի յաճախորդներ ունէք, ո-  
րոնց վազուց հարկաւոր էք վոնդել: Բայց ան-  
յարմար է անքաղաքավարի կերպով վոնդելը, իսկ  
հիմա արդէն գիտէք...

Վերատեսուչ. Շատ ձիշտ է, մէկ խօս-  
քով դուք ինձ արդէն հասկացաք: Եհ, խնդրե-  
ցէք ուրեմն այստեղ պ. Շպոփնդերին և ի նկա-  
տի ունեցէք, որ ես շատ շուտ եմ զանգահարե-  
լու. լսում էք, շատ շուտ...

Կապելդ. Լսում եմ: (Բացելով միջին դուռը):  
Խնդրեմ պ. Շպոփնդեր: (Մտնում է Շպոփնդերը, իսկ  
կապելդիմերը դուրս է գնում դուռը իր յետելից ծածկելով):

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Վերատեսուչ եւ Շպոփնդեր.

Վարինդեր. (կայտառ, միջահասակ մարդ. խօ-  
սելիս ձեռքով շարժումներ է անում): Պատիւ ունիմ  
ներկայանալու ձերդ գերազանցութիւն: Ներե-  
ցէք, ձերդ գերազանցութիւն, որ խանդարեցի  
ձեզ. ինձ ասացին, որ դուք շատ զբաղուած էք,

ներեցէք, որինձ թոյլ տուի ձեզ ներկայանալու, այսպէս ասած՝ հէնց ձեր շահերի տեսակէտից... այսինքն ձեր թատրոնի շահերի համար. իսկ ես անպատճառ ցանկանում էի ձեզ անձամբ տեսնել: Զերդ գերազանցութիւն, ես դիտեմ, որ այժմս ձեզ մօտ այս սեղոնը այնքան էլ յաջող չէ...դրա համարէլ կցանկանայի առաջարկել ձեզ... Օ՛, կարող եմ ձեզ հաւատացնել, յիսուն արդինաւոր ներկայացում... հաւատացնում եմ ձեզ, որ երաշխաւորում եմ 50 ներկայացում ձերդ գերազանցութիւն, նոյնիսկ անշաղով: Մինչև այժմս, տեսնում էք, ձեր խմբի մէջ չկայ «աստղ», չկայ այսպէս ասած՝ «մագնիս»... չկայ յարմար կին, որը գրաւի բոլորի ուշագրութիւնը. ձեզ մօտ այդպիսի մէկը բացակայում է: Իսկ ես ձեզ համար մի այդպիսի գերասանուհի եմ գտել: Զարմանալի և հրաշալի գերասանուհի է և ընդամենը՝ երեք հարիւր մարկ՝ երեկոն, այն էլ առանց աւանսի: Միմիայն երեք հարիւր, հասկանում էք... իսկ ինձ ընդամենը՝ տառը տոկոս: Ահա պայմանագիրը կարգացէք և ստորագրեցէք:

Վերատեսուչ. Թոյլ տուէք ինձ ևս խօսել. Թոյլ տուէք խնդրեմ... չէ՞որ ինձ թոյլ չէք տալիս ասելու, որ...

Շպուին գեր. Ե՞ս, ձեզ թոյլ չեմ տալիս... բայց չէ՞որ դուք ոչինչ չունիք ներա դէմ արարկելու... ձերդ գերազանցութիւն, ինզրեմ ասէք,

ինչ կարող էք ներա վերաբերեալ ասել: Ի հարկէ, ոչինչ: Կարգացէք միայն պայմանագիրը, հաշուեցէք ել և մուտքը, ստորագրեցէք և թոյլ տուէք ինձ ներկայացնելու ձեզ այդ գերասանուն... և գործը, ձերդ գերազանցութիւն, կատարուած է:

Վերատես. (վեցնում է պայմանագիրը եւ լուս կարդում): Ա՛, կիւչինէն: (Մածելով, եւ ժպալով): Է՛, բարեկամ, այդ, գիտէք, նոր գիւտ չէ...

Շպուին գեր. Ինչպէս, ինչ, կիւչինան գիւտ չէ, կիւչինան, ձերդ գերազանցութիւն... ողորմացէք ձերդ գերազանցութիւն... թոյլ տուէք ձերդ գերազանցութիւն... բայց, չէ՞որ նէ գիւտ չ... այդ այնպիսի յոյնու է... բայց նէ... բայց այդ... բայց չէ՞որ նէ ինքը կեանքն է, և ինչպիսի ձայն, ինչպիսի ձոխութիւն, զարմանալի, սքանչելի... նէ հսկայական յաջողութիւններ է ունեցել Ամերիկայում, հսկայական... իսկ դուք, ձերդ գերազանցութիւն, ասում էք գիւտ չէ:

Վերատեսուչ. (հանգիս): Ահա ձեր պայմանագիրը... վերցրէք... շատ եմ ցաւում, որ իզուր անհանգստացաք և ժամավաճառ եղաք:

Շպուին գեր. Օ՛, ես ժամավաճառ լինեմ, երբէք. ես ձրի ոչինչ շեմ կատարում. իմ ամենաարժան տոկոսը հինգ տոկոսն է... բայց ինչպիսի ասէք ինչ ունիք կիւչինայի դէմ:

Վերատեսուչ. Ե՞ս, ոչինչ, միայն նէ մեղ հարկաւոր չէ: Այդ գերասանութին զուրկ է տաղանդից: Ներանում տաղանդի նշոյլ չկայ:

Շպոփն գեր. (համբերուքինից դուրս գալով): Լիւչինան տաղանդից զժորկ... գիտէք, ձերդ գերազանցութիւն, որ այդ բոլորից յետոյ, ճշմարիտն ասած՝ չգիտեմ թէ ի՞նչ անուն տամ ձեզ... ես, ես... ես... իսկապէս որ խօսք չեմ գտնում...

Վերատեսուչ. Ուրեմն, և շատ ուրախ եմ:

Շպոփն գեր. Ուրախ էք. ոչ, այդ դէպքում պէտք է խօսել, այն, ես կիսուեմ, ես կգոռամ... Բայց իմացէք, ձերդ գերազանցութիւն, որ դա այնպիսի մի անարդարութիւն է, որ... (Հարցապնդում է եւ յարձակողական դիրք բոնում դեպի վերատեսուլը): Ես, գիտէք... ես ձերդ գերազանցութիւն, այստեղից չեմ հեռանայ մինչև որ դուք, Լիւչինայի վերաբերեալ պայմանագիրը չստորագրէք. այն, կրկնում եմ, ոչ մի դէպքում այստեղից ոտքս դուրս չեմ դնիլ մինչև որ դուք...

Վերատեսուչ. Ի՞նչ, ասում էք չէք հեռանալ... ահա թէ ի՞նչ... (Աշխատում է ոտքով հաղի զանգի կոճակը, բայց չէ յաջողլում, որովհետեւ նպրինգերը կանգնած է հետին կոճակի մօս):

Շպոփն գեր. Զերդ գերազանցութիւն... դուք վերջը կզղաք, որ առաջարկութիւնս մերժեցիք, կտեսնէք թէ չ'զղաք... բայց նորից

ինդրում եմ ասէք, թէ ի՞նչ ունիք լիւչինայի դէմ...

Վերատեսուչ. (բոլոր ժամանակ աշխատում են ոտքով զանգահարել): Ի սէր Աստծոյ ինձ հանգիստ թողէք: Ես ձեր լիւչինային բոլորովին չեմ ել ճանաչում...

Շպոփն գեր. (պարտուած յետ հաշուելով): Մինչև անգամ չէք ճանաչում... նոյնիսկ չգիտէք թէ ով է նէ... բոլորովին չգիտէք...

Վերատեսուչ. (օգտուելով այդ մօմենտից ոտքով սպիտամ է զանգի կոճակը եւ կուլիսներում լսում է զանգի ձայնը): Վերջապէս...

Շպոփն գեր. Դուք, ուրեմն, բոլորովին չէք տեսել, կամ լսել լիւչինային. բայց այդ անկարելի բան է, ձերդ գերազանցութիւն, որ...

## ՏԵՍԻԼ ԵՐՔՈՐԴ

Նոյն եւ կապելդիներ

Կապելդին գեր. (արագ մտնում է): Զերդ գերազանցութիւն, ձեզ մօտ եկել է մի ըեժիսսեօր, նա շատ է ցանկանում ձեզ տեսնել...

Վերատեսուչ. Այս ըսպէցիս: (Հրամես տալով նարինգերին): Ներեցէք ինձ սիրելի բարեկամս, դուք տեսնում էք, որ ինձ հետ տեսակցել է ցանկանում ըեժիսսեօրը, ներեցէք, որ այլև

հնարաւորութիւն չունիմ մեր խօսակցութիւնը շարունակելու...

Շպռինգեր. Թեժիսսեծը, բեժիսսեօք Վալտերը, բայց չէ-որ նա իմ բարեկամն է: Ուրեմն խնդրեցէք նրան այստեղ, նա մեզ երբէք չի խանդարի. ամենավայրի... (Գնում և դեպի դուռը ու դուրս նայում): Վալտեր... մտէք, մտէք... (Զարմացած): Բայց մւը է նա: Այստեղ ոչ-ոք չկայ...

Կապելդիներ. (Շփորուած): Նա երկի յետ գնաց... (Հարցական նայեաց) և ձգում դեպի վերահսույը):

Շպռինգեր. Գնաց, ուրեմն, կնշանակէ, որ նրան այնքան էլ անհրաժեշտ չէր տեսակցելը: (Կապելդիներին): Գնացէք, մեզ մի խանդարէք. մենք շատ լուրջ խօսակցութիւն ունինք: Գործը լուրջ է: Ասացէք բոլոր այցելուներին, որ նորին գերազանցութիւնը հրամայել է ոչ-ոքի չընդունել: (Դաւրս և անում կապելդիներին):

Վերատեսուչ. Դուք իմ համբերութիւնը ի չարն էք գործ դնում, պարոն Շպռինգեր. գիտէք թէ այդ ինչպիսի տանջանք է:

Շպռինգեր. Ասում էք թէ տանջանք, ձերդ գերազանցութիւն, հաւատացէք, որ ես ձեզ համար եմ աշխատում: Հաւատացէք, որ դուք ինձ շնորհակալութիւն կյայտնէք: Միայն թոյլ տւէք ինձ հրաւիրել կիւշինային այստեղ: Տեսէք ներան.. լոեցէք միայն... ես դրազ կդամ, որ դուք իսկոյն

և եթ կհրաւիրէք ներան ձեր թարոնը, հաւատացնում եմ ձեզ, որ բացի դրանից, նոյնիսկ դուք ինքներդ նրա վարձը կկրկնապատկէք...

Վերատես. Երբէք մեր թարոնում այդպիսի բաներ տեղի չեն ունենում: (Վճռականապես): Ո՞չ: Այդ հարցը վճռուած է վերջնականապէս: Այդ ձեր կիւշինայի մասին ինձ արդէն վաղուց ասել են... եւ ես ներան ոչ-մի դէպքում չեմ կարող հրաւիրել... Մնաք բարեաւ պ, Շպռինգեր...

(Ուժով նպաստ և զանգի կոճակը):

### ՑԵՍԻԼ ՉՈՐՉՈՐԴ

Նոյնի և կապելդիներ.

Կապելդիներ. Զերդ գերազանցութիւն, ձեզ հետ ցանկանում են տեսնուել երկու հեղինակ, ապահովագրական ընկերութեան գործակալը և շինարարական մասնաժողովի նախագահը...

Վերատեսուչ. (արագ): Շինարարական մասնաժողովի նախագահը, այն, այն, այս բոպէյիս, այս բոպէյիս... Մնաք բարեաւ պարոն Շպռինգեր, տեսնում էք, որ այլևս անկարող եմ իմ խօսակցութիւնը շարունակել. Ժամանակս չէ ներում...

Շպոինդ. (աճխատելով նրան կանգնեցնել):  
Միայն մի խօսք, ձերդ գերազանցութիւն:

Վերատեսուչ. Ո՞չ, ոչ, ներեցէք, որ անկարող եմ... (ըսալ դուրս է գնում):

Շպոինդեր. (բարկացած): Յաւալի է. այսպիսի էլ անյաջողութիւն: Էլի մի հինգ ըռպէ և ես նրան կհամոզէի և պայմանագիրն էլ անպայման ստորագրուած կլինէր: (Նստում է): Ահա թէ ինչ. ես նրան այստեղ կոպասեմ... նա երեկ շուտ կվերադառնայ:

Կապելդիներ. (իրեն կորցրած): Նա, ոչ, նորին գերազանցութիւնը շուտ չի վերադառնալ, ձեզ կվիճակուի երկար սպասել... շատ երկար...

Շպոինդեր. Ոչ մի նշանակութիւն չունի... ես ժամանակ ունիմ, այնպէս - որ կարող եմ սպասել:

Կապելդիներ. Այս Աստուած, ի՞նչպէս սրան վռնդել: (Կուլիսներում լսում է դռան փակուելու ձայն): Ահա և նորին գերազանցութիւնը վերադառնում է:

Շպոինդեր. (վեր քոչելով), Այս անգամ արգէն նա իմ ձեռքից չի ազատուի:

## ՏԵՍԻԼ ՀԻՆԴԵՐՈՐԴ

Նոյնի եւ իրմա.

Իրմա. (մտեռում է միջին դռնով, վրան ձգած գեղեցիկ մանուշ): Ներեցէք խնդրեմ. արդեօք կարմղ եմ պարոն վերատեսչին տեսնել...

Շպոինդեր. Ա՛, այդ դժւք էք, շատ էք շտապել. դեռ ես չեմ կարողացել վերջնականապէս համոզել նորին գերազանցութեանը...

Իրմա. Ի՞նչպէս թէ «համոզել», ի՞նչ է նշանակում «համոզել»...

Շպոինդեր. (ուսերը բարձրացնելով): Նա չէ ցանկանում ձեզ հրաւիրել: Զեմ հասկանում թէ ինչու է նա այնպէս յամառութեամբ մերժում իմ առաջարկութիւնը և թէ ինչ ունի ձեր դէմ:

Իրմա. Իմ դէմ, չէ-որ նա բոլորովին ինձ չէ էլ ճանաչում: Աւրեմն ի՞նչ կարող է ունենալ իմ դէմ:

Շպոինդեր. (հանգստացնելով ներան): Բայց նրան կհամոզեմ, ես...

Իրմա. (քոնկուած): Բոլորովին ի զուր, ես երբէք էլ չեմ ինդրում. երբէք, ես սողալու սովորութիւն չունիմ. երբէք: Դա իմ ինքնասիրութիւնը խստ վիրաւորում է: Եւ ես կցանկայի նորին գերազանցութեան պարոն վերատեսչին

մի լաւ գաս տայի և հաստատէի, որ... (Յանկարձ Եւրանում նոր միթք է յղանում): Գնացէք, և խնդրեմ ինձ միայնակ՝ թողնէք այստեղ. ես անձամբ կը խօսեմ պարոն վերատեսչի հետ...

Շպուխն գեր. Դժուք, բայց միթէ դուք առանց ինձ կարող էք այդպիսի մի մեծ գործ գլուխ բերել:

Իրմա. Գնացէք խնդրեմ, և բոլորը թողէք ինձ, դուք կտեսնէք...

Շպուխն գեր. Բայց այնուամենայնիւ՝ կը ստանամ իմ տաս տոկոսը:

Իրմա. Այս, այս, հանգիստ մնացէք, անպայման կստանաք, միայն թէ հեռացէք:

Շպուխն գեր. Այդ գէպքում ես համաձայն եմ և դուքս եմ գնում. ց'տեսթիւն: (Դուրս է գնում):

Իրմա. (կապելիներին): Լսիր, ես ցանկանում եմ սպասել պարոն վերատեսչին, կարել՞ է:

Կապելդիներ. Սպասել կարելի է, բայց նրա հետ տեսնուել անկարելի...

Իրմա. (Երան փող տալով): Իսկ այժմ, կարելի է...

Կապելդիներ. (Ժպտալով նայում է փողին): Այս, կարելի է. ահա և ինքը՝ նորին գերազանցութիւնը այս կողմն է գալիս:

ՎԻՃԱՆՈՏԵԿԱ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ  
Ակադեմիա Խոր  
СССР

### ՏԵՍԻԼ ՎԵՑԵԲՈՐԴ

Նոյն եւ վերատեսուչ.

Վերատեսուչ. (Մտնելով): Ի՞նչ է, գնաց միերջապէս, (Նկատելով կապելին): Այս ի՞նչ է նըշանակում: (Զարմացած նայում է կապելիներին):

Իրմա. (արդ ռոպեից սկսում է խօսել չափազանց սիրալիք): Ներեցէք ձերդ գերազանցութիւն, որ համարձակուեցի առանց թոյլտութեան ներս մտնել: Ձեշտ է, զա իմ կողմից անրազաքավաշութիւն է, բայց ես ստիպուած էի այդպէս անել, որովհետև չէի ցանկանում, որ ինձ նախասենեակում տեսնէին. յոյս ունիմ, որ այնքան բարի կգտնուիք, որ չէք բարկանալ...

Վերատեսուչ. Խնդրեմ, խնդրեմ. Երբէք: Խնդրեմ նստել... (Կապելիներին): Դուք կարող էք գնալ: (Ժեսով կապելիներին հասկացնում է, որ ըստով Երան կզանգահարէ):

Կապելդիներ. (ցոյց տալով, որ հասկանում է, դուրս է գնում):

Վերատեսուչ. Ուրեմն... տիկին. Ի՞նչ կը ցանկանայիք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրմա, Ես ձեզ մօտ մեծ խնդիր ունիմ պարոն վերատեսուչ, շատ մեծ: Թոյլ առւեք նախ ներկայանալու՝ Իրմա Վերեսկէ: (Վերատեսուչը տեղից բարձրանալով ձեռք է տալիս): Ես մի համեստ ընտանիքի զաւակ եմ և յաջողութեամբ վերջացրել եմ պանսիօնը... և շատ լաւ սովորել. վարժ խօսում եմ մի քանի լեզուով... ունիմ ձայն... ես երգում եմ, և ասում են, որ յիանալի պարում... ի հարկէ զանազան պարեր եմ... այդ պատճառով որոշեցի ինձ բեմին նուիրել...

Վերատեսուչ. (անտարբեր): ԱՌ, ուրեմն եկել էք խնդրելու ձեզ մեր թատրոնն ընդունել...

Իրմա. ՕՌ, ոչ, ես այնքան էլ ինքնավատահ չեմ: Ոչ, դուք սխալուեցիք. ես եկել եմ միայն ձեզ խնդրելու, որ դուք բարի գտնուեք ինձ լսել, այսպէս ասած՝ վերաքննէք և ինձ ասէք, թէ ունիմ արդեօք ես տաղանդ և արժէ բեմ դուրս գալ: (Նողոքորբելով): Բոլորին յայտնի է, որ դուք, պարոն վերատեսուչ, շատ լաւ տեղեակ էք թատրոնական գործին և որ ձեր կարծիքը այնպիսի հեղինակաւոր կարծիք է, որ անպատճառ կցանկանայի իմանալ...

Վերատեսուչ. (լուրջ): Այս, այդ ճիշտ է, ինձ հեղինակաւոր են համարում և դա իրաւացի է: Իմ կարծիքին, որպէս գիտունի և գործին տեղեակ մարդու կարծիքին, շատերն են լսում

և դա ունենում է իր վճռական հետևանքները. ամենքը ինձ ճանաչում են իրեն անկաշառակեր և անկողմնապահ գնահատողի: Ինձ համար ամենից անհրաժեշտը տաղանդն է, իսկ միւս բաների վերաբերմաբ ես խուլ և կոյր եմ. գիտէք, ինձ ոչնչով չեք կարող կաշառել, կրկնում եմ, որ ես կոյր եմ:

Իրմա. (կոկետուրեամբ): Իսկապէս:

Վերատեսուչ. ՕՌ, կարող եմ հաւատացնել, որ այդպէս է: Գիտէք, մենք, թատրոնի վերատեսուչներս այն աստիճանի երես առած մարդիկ ենք, որ դէպի այդ բաները վերաբերում ենք լիակատար սառնասրտութեամբ. մեր գրութիւնը կարելի է համեմատել այսպէս ասած՝ քաղցրեղինի վաճառանոցի հետ: Երբ շաքարագործները նոր են ընդունւում, ազահարար յարձակւում են քաղցրաւէնիների վրայ և այնքան ուտում, մինչև որ խանգարում են իրենց ստամոքսը, իսկ երբ խանգարում են, այն ժամանակ բոլոր քաղցրաւէնիներից այնպէս են զգւում, որ նոյնիսկ նայելուց խուսափում. այս, կատարելապէս փախչում... Ահա այդպէս եմ և ես...

Իրմա. ԱՌ, ուրեմն, դուք արդէն վչացըրել էք ձեր ստամոքսը և կորցըրել ձեր ախորժակը:

Վերատեսուչ. Բայց, ի՞նչպէս ասել ձեզ: Եթէ առժամանակ ինձ յետ եմ պահում, այսին-

քըն ինձ զսպում եմ... ապա, համեմած կերա-  
կուրները ժամանակ առ ժամանակ ինձ համեղ  
են թւում...

Իրմա. Ահա, համեղ... կնշանակէ, դուք  
սիրում էք պղպեղը ե...

Վերատեսուչ. (Խօսենալով ներան): Այն,  
պղպեղը, աղը, և... այլն... և ուղղակի ներկան և  
մասցած բոլորն էլ նմանապէս... ներկան...  
(Ծփծաղում եւ ըսլում է ներա ձեռքը):

Իրմա. (Կօկենուրեամբ): Հասկանալի է: Ու-  
րեմն գնուք կարծում էք, որ ես... որ ինձ...

Վերատեսուչ. (Բարեսիր): Այն, բացար-  
ձակօրէն ասում եմ ձեղ, որ ինձ վրայ ազդում  
են միմիայն ոչ-թատրոնական կանայք, իսկ մեր  
թատրոնական կանայք...

Իրմա. Բայց չ՞ - որ իմ մէկ ոտքը արդէն  
բեմի վրայ է...

Վերատեսուչ. Ի՞նչ կայ որ: Վերցրէք ձեր  
ոտքը այդ կամուրջից և այնտեղ միք բարձրա-  
նալ... Եեմն այն սայթաքուն ուղիներից մէկն է,  
որտեղ դու հեշտութեամբ կարող ես սայթաքուել:

Իրմա. Ոչ, ոչ, իմ վճիռն անքակաելի է  
և դուք համաձայնուեցէք, որ իմ վճիռը բացի դո-  
րանից արդարացի է, Բայց թոյլ տուէք ինձ մի  
անգիրէն երգ երգելու ձեղ համար: (Երգում է ան-  
գիրական շանօնենելա):

Վերատեսուչ. (զոհ դիմով): Որպէս ըսկա-  
նակի՝ վատ չէ:

Իրմա. (Ժպտալով): Այս ուրեմն, այժմ մի  
որևէ բան ֆրանսերէն: (Հանում է վրայից մասօն  
եւ երգում թրանսերէն շանօնենելա):

Վերատեսուչ. (Ջիացած): Այս, այդ են  
հասկանում եմ... ահա այդ հիանալի է: Եւ ի՞նչ-  
պիսի համարձակութիւն... կարծէք թէ դուք ար-  
դէն վաղուց է ինչ բեմի վրայ էք...

Իրմա. Այս, ուրեմն, ես ունիմ մի փոքր  
տաղանդ. իմ մէջ կայ տաղանդի նշոյլ:

Վերատեսուչ. (Վահում է իրեն աւելի ազատ):  
Մի փոքր նշոյլ: Ինչ էք ասում, դուք ահազին  
տաղանդ ունիք: Ձեզ այժմ հարկաւոր է միմիայն  
աւելացնել մի քանի ուրոււագծեր՝ այսպէս ա-  
սած մի քիչ աւելի պայծառացնել ձեր ձերը, որը  
ուրախութեամբ ես ձեղ ցոյց կտամ... ես... ես  
կհասցնեմ ձեղ մինչև այդ անհրաժեշտ վայլին...  
կպարապեմ ձեղ հետ և դուք կտեսնէք...

Իրմա. (Սիրալիր աշխատում է ազատուել տեսչի  
փաղաճանից): Ոչ, ես չեմ ցանկանում ձեր  
թանկագին ժամանակը խլել. ոչ, այդ անյարմար  
է, նոյնիսկ ամօթ է... այդ անհնարին է: Ձէ որ  
դուք ինքներդ ասացիք, պարոն վերատեսուչ, որ  
ձեր ստամոքսը խանգարուած է:

Վերատեսուչ. (Խրմալին նետելով): Այս,

գուք խեղկատակ. դուք սարսափելի խեղկատակ էք, զբա համար էլ հարկաւոր է ձեզ պատժել և ես ձեզ կպատժեմ... (Ուզում է գրկել):

Իրմա. Ո՞չ, այդ ի՞նչ էք անում, եղեք ողջախոհ... ձերդ գերազանցութիւն... Զէ որ այդ ձեզ վնասակար է...

Վերատեսուչ. Ո՞չ, ես զգում եմ, որ ախորժակս բացուել է... ես... ես քաղցած եմ... սարսափելի քաղցած... ես հաւատացնում եմ ձեզ, որ այնպիսի ախորժակ ունիմ, այնպիսի... որ... (Նա յարձակում է իրմայի վրայ, գրկում մօտեցնում գրասեղանին եւ ուզում է համբուրել, բայց վրդովմունից պատահնակը ոսքով կպշում է գանգի կոճակին, որը եւ զանգահարում է):

### ՏԵՍԻԼ ԵԹԹՆԵՐՈՒԹԻ

Նոյնի եւ կապելդիներ.

Կապելդիներ. (լուրջ). Զերդ գերազանցութիւն, մասսաժիստկան եկաւ:

Վերատեսուչ. Յիմար, քեզ ով կանչեց, փայտէ զլուխ:

Կապելդիներ. Բայց չէ որ, ձերդ գերազանցութիւն, դուք հիմա էլ կանգնած էք զանգի կոճակի վրայ:

Վերատեսուչ. (Վախեցած ոսքը յիւ և հաւում): Ա՛հ, ձիշտ որ... ես այնպէս շփոթուած և զրգուուած էի, որ չկարողացայ նկատել... (Կապելդիներին): Հեռացէք, այստեղից: Եթէ նոյնիսկ, բոլոր զանգերը միանգամից զանգահարեն, հասկանում ես, այն ժամանակ էլ չհամարձակուես ոտքդ ներս դնել, լսնեմ ես:

Կապելդիներ. Հասկանում եմ հասկանում... (Դուրս է գնում):

Վերատեսուչ. (Սուրբ ուսնիչ հաւելով): Ո՞ւֆ, ուղղակի խեղգուում եմ... իսկապէս որ ամաչում եմ. ես այսպէս զրգուուած... այսպէս շփոթուած: Ես չեմ յիշում մինչև անգամ թէ Երբ զգացի այսպիսի գրգուում... զարմանալի... պարզ... բայց միենոյն ժամանակ շատ զուրեկան... այնպէս... այնպէս, որ... (Նայում է ուրշը): Բայց ուր թռաւ այն սրանչելի թոչնիկը...

Իրմա. (ազատուելով նրա գրկից, բագ է կենում շիրմայի ետեւը, որտեղ եւ սկսում է արազուրեամբ ուրերք փոխել յանախ շիրմայի ետեւից զլուխը դուրս հանելով, որպեսզի դրանով աննկատելի դարձնի իր հազմուելը Ե՞ս, ես այստեղ եմ...)

Վերատեսուչ. (Ուրախացած): Ա՛, դուք այդտեղ էք, ուրեմն դուք գեռ այստեղ էք. ի՞նչպէս ուրամ եմ... իսկ ես վախեցայ, կարծելով, թէ դուք արդէն թռել էք: Բայց, ասացէք խնդրեմ, ի՞նչո՞ւ

էք այդտեղ թագնուել... եկէք... եկէք այստեղ...

Իրմա. Ո՞չ, չեմ կաըող պ. վերատեսուշ... ես հազիւ եմ ազատուել ձեր ձեռքից, իսկ այստեղ ես ինձ պատնէշի ետեն եմ զգում... այստեղ շատ լաւ է, ձեզանից վախենում եմ... դուք շատ շուտ բռնկուող էք... ու ձեր աչքերը սարսափելի կերպով փայլում են... այն աստիճան վառում, որ... Ո՞չ, այստեղից ես չեմ դուրս գալ... վախենում եմ... սարսափելի աչքեր ունիք...

Վերատեսուշ. (աշխատելով սառնարին ձեւանալ): Ի՞նչպիսի աչքեր. շատ սովորական աչքեր... իսկ ես էլ բոլորովին հանգիստ եմ (Համբերոքիսիր կտրած): Դէհ, վերջապէս մօտեցէք... շնուր... այլևս համբերել անկարող եմ... ես միմիայն կանանց գլուխը տեսնելու սովոր չեմ. այդ անկարող եմ տանել: Իսկապէս, ի՞նչ է նշանակում միմիայն գլուխը... այդ ինձ համար նորութիւն է...

Իրմա. Այն, ինչ նորութիւնն է՝ հետաքըրքրական է: (Ծիծաղում է): Միթէ ճշմարիտ չեմ ասում, հետաքըրիք է, չէ:

Վերատեսուշ. Իմ կարծիքով, ո՞չ: (Սօսենում է շիրմային, բարձրանում բազկարոսի վրայ և ներս նայում շիրմայի նեղից): Բացի զրանից այդտեղ ձեղ շատ անյարմար է և տեղն էլ շատ նեղ...

Իրմա. Ինձ համար բաւական է...

Վերատեսուշ. Իսկ եթէ ես ուղենայդ գալ... այդտեղ, ձեզ մօտ...

Իրմա. Ո՞չ, այդ անկարելի է: Այստեղ կողմանակի անձանց մուտքը խսախւ արդելուած է...

Վերատեսուշ. Միմիայն թոյլ տուէք այդտեղ անցնել... և նրանից յետոյ երաշխաւորում եմ, որ ես այլևս կողմանակի չեմ լինի... հաւատացնսում եմ ձեզ... ուրեմնն... կարելի է...

Իրմա. Ո՞չ, ձերդ գերազանցութիւն, չէ կարելի...

Վերատեսուշ. Այդ գէպքում դուք դուրս եկէք... ես ձեզ խնդրում եմ, աղաչում եմ... դուրս եկէք... չէ որ ես դեռ քննութիւնը չեմ վերջացրել, այլ շարունակում է...

Իրմա. Լաւ, դուրս կգամ, միայն մի պայմանով:

Վերատեսուշ. Ի՞նչ պայմանով:

Իրմա. Ահա թէ ինչ. դուք պէտք է նստէք ձեր գրասեղանի առաջ, իսկ ես կկանգնեմ ձեզ մօտ...

Վերատեսուշ. Այն, բայց միայն որքան կարելի է մօտ:

Իրմա. Այն, շատ մօտ... (Հեղմանելով): այնքան մօտ, որ կարողանամ մէկ ոտով կանգնել

ձեր զանգի կոճակի վրայ, որ ձեր սահմանից անցնելու ամեն մի փորձը կարողանամ զանգահարելով խանգարել...

Վերատեսուչ. Ահա թէ ի՞նչ: (Կատաղած): Այդ արդէն վրդովեցուցիչ է, դուք սարսափելի չարախնդաց կին էք եղել...

Իրմա. Հարցն արդէն վճռուած է, ձերդ գերազանցութիւն և դուք ընդունել էք իմ պայմանները...

Վերատեսուչ. Եթէ ես սկզբից իմանայի... (Սնբաւական դեմքով յետ ու առաջ է քայլում. բայց յանկարծ կանգ է առնում և ուրախացած ասում կողմ): Զէ որ կապելդիները միևնոյն է չի գայ, քանի որ նրան նոր արգելեցի... (Խրմային): Շատ լաւ, համաձայն եմ, դուրս եկէք: (Մօտենում է գրասեղին):

Իրմա. (Յանկարծ դուրս է վազում շիրմայի ենելից գուսարի հազուսով և պատի նշան անելով կանգնում վերատեսչի առաջ. որպեսզի ներա հազնուելը աննկատի լինի ու դուրս գալը ենթեկտով, աննրաժեշտ է, որ ներան օգնիին հազնուելու ժամանակ):

Վերատեսուչ. (Վեր բռչելով): Օ՛, ես պարտուած եմ... սպանուած...

Իրմա. (Երգում է վենցրիական րօման. վերջը պարում է չարդա, իսկ ներա նետ միասին է վերատեսչը):

Վերատեսուչ. (պարի վերջը): Այն, դուք կատարեալ տաղանդ էք, զարմանալի տաղանդ: Զեզ հրաւիրում եմ... դուք մեզ արդիւնաւոր ներկայացումներ կտաք: (Վազում դեպի գրասեղանը): Ահա այստեղ ես ունիմ պայմանաթղթեր: Ես նրանցից մէկը կստորագրեմ, իսկ դուք... դուք գրեցէք ձեր ցանկացած պայմանը, որին ես առաջուց համաձայն եմ... (Սիրալիր): Ահա, խընդրեմ...

Իրմա. (Մատի ծայրերով վերցնում է պայմանաբառը): Այդ բոլորը շատ լաւ. բայց նախ քանիմ ստորագրելը, անհրաժեշտ է ձեզ, իմանալ իմ ով լինելը և թէ ի՞նչպէս է իմ բեմական անունը:

Վերատեսուչ. Օ՛, այդ ինձ հարկաւոր չէ իմանալ. այդ ինձ համար նշանակութիւն չունի...

Իրմա. Զեմ կարծում... որովհետեւ... որովհետեւ... ես... ես այն ձեր ատելի իրմա կիւչենան եմ, որին դուք չէիք ցանկանում ոչ միայն հրաւիրել, այլ նոյնիսկ ձանաչել, որովհետեւներանում դուք տաղանդի նշոյն անգամ չէիք նկատում և ահա, ապացուցելու համար, որ ներանում կայ փոքր իշտակ տաղանդի նշոյլ, որը դուք այնպէս յամառութեամբ բացառում էիք...

Վերատեսուչ. (Խրեն կորցրած): Օ՛, այն,

այն, դուք տաղմանդաւոր էք, դուք հանձար էք, և ես... շատ և անսահման մեղաւոր եմ ձեր առաջ... ներեցէք, ներեցէք ինձ... և ստորագրեցէք պայմանագիրը... խնդրում եմ...

Իրմա. (վճռականապես): Ո՞չ:

Վերատեսուչ. (պայծած): Ո՞չ... Բայց ես համաձայն եմ ստորագրելու, որքան էլ դուք ձեզ վարձատրութիւն նշանակելու լինիք...

Իրմա. (պատռում է պայմանագիրը): Շատ ցաւում եմ ձերդ գերազանցութիւն, որ ես արդին հրաւիրուած եմ ուրիշ թատրոնում և ստորագրել եմ պայմանագիրը...

Վերատեսուչ. Ո՞ր թատրոնում, և ում հետ...

Իրմա. Վիէնայի «Պարիզիօնա» թատրոնում: (Առնելով մանուսի ուսերին, սիրալիր կերպով դիմելով վերատեսչին): Յոյս ունիմ ձերդ գերազանցութիւն, որ դուք ինձ պատիւ և բաւականութիւն կտառառէք ձեր ներկայութեամբ և կժամանէք մեր թատրոնը իմ բեմ բարձրանալու առաջին օրը. ես խաղում եմ «Թատրոնի վերատեսչի մօտ» նոր պիէսան...

Վերատեսուչ. (սարսափած): Ի՞նչ... ի՞նձ... բեմ հանել... ի՞նձ... ծօծ...


Իրմա. Այն, այո, դուք դուշակեցիք: (Ծիծաղում է): Համեցէք, նայեցէք, և ծափահարեցէք ինձ... (Ծիծաղելով ուղեւուում դեպի դուռը):

Վերատեսուչ. (ընկնելով բազկարողի վրայ): Օգնեցէք, խեղդում եմ... ես, ես... ջու... ը, ջուր տուէք... մի բաժակ ջուր... (Զանգահարում է ոսերով եւ ձեռիբերով. կուլիսներում լսում են զանգերի ձայներ, բայց ոչ-ոք ներս չի մտնում):

Իրմա. (ծիծաղից բուլացած ուղղում է վերատեսչին օդային համբոյրներ եւ անյայտանում):

Վերատեսուչ. (բարկուքինից համբեռուքին նը կտրած): Ոչ-ոք չէ գալիս... ես... բոլորին կախաղան կհանեմ... կախաղան...

(Վարագոյրը արագ իջնում է չարդաշ եղանակի նուազածովթեան տակ):







Сан  
6/83

ВЧЕРЬ ОТ

Института  
Физикохимии  
Академии Наук  
СССР

34358



Յանկացողները թող դիմեն հետևեալ հասցեով  
Тифлисъ, противъ пом. кн. Воронцова, книж.  
торговля „Экономія“, Ог. Майляну.